ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<06>> հուլիսի 2026թ. N ՄՈ/381-Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ N 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՌ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գոռ Այվազյանի 2026 թվականի հուլիսի 3-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արմավիրի N 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոռ Այվազյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 7-ից օգոստոսի 10-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոռ Այվազյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի N 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի N 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Անահիտ Վասիլյանին:
3. «Արմավիրի N 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Անահիտ Վասիլյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի

հուլիսի 7-ից օգոստոսի 10-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Գոռ Այվազյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 11-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: GRIGORYAN ARAM 2309720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**